ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևին (նկարին) համապատասխան: Տաբատ (կանացի) (Ձև 7): Պատրաստվում է ազատթող փողքերով, մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), ուղիղ է, առանց ծալքերի, ունի բնական մետաքսյա աստառ (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%) և մուգ կարմիր եզրաշերտ (2581 արտիկուլի մահուդե կտորից): Տաբատի գոտին գոտեմակօղերով է, կոճկվում է ձախ կողմից 2 կոճակով, գրպանները թեք են, ներկարված և ունեն կայծակնաճարմանդ: Տաբատի առջևի մասի յուրաքանչյուր կողմում մշակվում է մեկական սեղմոն՝ արդուկի գծի ուղղությամբ, իսկ ետևի մասի յուրաքանչյուր կողմում՝ երկուական սեղմոն: Տաբատի գոտին ունի 55 մմ լայնություն, գոտու վրա կարվում է 8 կամրջակ, որոնց երկարությունը 55 մմ է, լայնությունը՝ 1,8 սմ, իսկ տաբատի կողքի գրպաններն ունեն 3,5 սմ թեքություն: Տաբատները ներսամասից պետք է ունենան պիտակ, որի վրա պետք է նշված լինի դրանց չափսը: Նախքան տաբատների պատրաստումը տաբատների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Տաբատների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև տաբատների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պիտակավորված,

	պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	